

# Ժողովուրդ

83  
(2749)

9 հունիսի ուրբաթ 2023  
տպագրության ԺԲ տարի

✉ ք. Երևան, Արմավյան 22ա/3 (0010) ☎ + 374 10 546423 @ info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

## ՔՊ-Ն ԳՆՈՒՄ Է ԳԻԼԻՋԱՆՆ՝ ՀԱՎԱՔԻ



ՔՊ-ում որոշել են, Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, հունիսին քաղաքական երկրորդ ժողովն անցկացնել Դիլիջանում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՔՊ քաղաքական ժողովը կկայանա հունիսի 16-ին եւ 17-ին: Ժողովին մասնակցելու են կառավարության անդամները՝ նախարարներ, փոխվարչապետներ, ԱԺ նախագահը, նրա տեղակալները, հանձնաժողովի նախագահները, տարածքային կազմակերպությունների ղեկավարներ եւ համայնքի ղեկավարներ, ինչպես նաեւ հրավիրյալ անձինք, որոնց կորոշի վարչությունը: ՔՊ-ում այս օրերին քաղաքական ժողովի հետ կապված թե՛ Նախապատրաստական աշխատանքներ են գնում. փորձում են այնպես անել, որ ժողովը բարձր մակարդակով անցնի, թերություններ չլինեն, որպեսզի Նիկոլ Փաշինյանը գոհ մնա: Կուսակցությունից մեզ հայտնեցին նաեւ, որ օրակարգի եւ հրավիրյալների շուրջ քննարկումները դեռ շարունակվում են, շատ հարցեր կան, որ վերջնական դեռ հաստատված չեն:

3 աջորդ շաբաթ մեկնարկում է ԱԺ հերթական նստաշրջանը: ԱԺ խորհուրդը երկուշաբթի օրը նիստ կգումարի՝ հաստատելու նիստերի օրակարգը: «Ժողովուրդ» օրաթերթը ԱԺ-ից տեղեկացավ, որ, ի թիվս այլ հարցերի, ԱԺ նիստերում հաջորդ շաբաթ քննարկվելու է 2022 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը: Այսինքն՝ նախատեսվում է, որ Նիկոլ Փաշինյանն ու նախարարները հաջորդ շաբաթ պետք է գնան խորհրդարան՝ ներկայացնելու բյուջեի կատարողականը: ՔՊ խմբակցության պատգամավորներից փորձեցինք հասկանալ՝ վարչապետն անձամբ կգնա արդյոք խորհրդարան: Մեզ ասացին, որ դեռ վերջնական որոշում չկա, կախված է Նիկոլ Փաշինյանի օրակարգից: ԱԺ-ում 2022 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը կներկայացնի ֆինանսների նախարար Վահե Զովհաննիսյանը:



վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ 2018 թվականի օգոստոսի 21-ի հրամանով՝ ստեղծվել է «Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողով»՝ «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2.2-րդ մասի համաձայն: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական փաստաթղթերից պարզեց, որ այդ հանձնաժողովը վերջին անգամ նիստ է հրավիրել 2019 թվականին: Իսկ ո՞րն է պատճառը. նախ՝ նշենք, որ հանձնաժողովի կազմում ի պաշտոնե ընդգրկված են բարեգործության ոլորտը համակարգող փոխվարչապետի գրասենյակի ղեկավար (հանձնաժողովի նախագահ), բարեգործության ոլորտը համակարգող փոխվարչապետի գրասենյակի մարդասիրական օգնության ծրագրերի վարչության պետ (հանձնաժողովի նախագահի տեղակալ), ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ, ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ եւ այլք: Իսկ ինչո՞ւ էր ստեղծվել հանձնաժողովը. պարզվում է՝ նրանք պետք է համակարգեն, որ բարեգործություն անելու համար նախ դիմեն Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողով, որն էլ, հենվելով օրենքի ու որոշումների կարգավորումների վրա, ուսումնասիրում է տարբեր հայտեր, ծրագրերը բարեգործական ճանաչելու մասին եզրակացություն տալիս: Եթե հայտը համապատասխանում է, ապա այն ճանաչվում է բարեգործական: Այս հանձնաժողովի աշխատանքներն ի պաշտոնե համակարգում էր Վարդա Սիսեռյանը՝ լինելով փոխվարչապետի գրասենյակի ղեկավար: Նրա՝ 2020 թվականին պաշտոնից եւ ՔՊ կուսակցությունից դուրս գալու մասին դիմումից հետո այս հանձնաժողովն այլևս չի գործում: Ամեն դեպքում, այդ մասին են վկայում պաշտոնական փաստաթղթերը:



հնչո՞վ են Հայաստանում զբաղված փոխվարչապետների գրասենյակները: Օրինակ՝ փոխվարչապետ Միեր Գրգորյանն ունի գրասենյակի ղեկավար, չորս խորհրդական, մեկ օգնական եւ մեկ արարողակարգի պատասխանատու: Այսինքն՝ այսքան մարդ սպասարկում է Միեր Գրգորյանին: Մյուս փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանն ունի գրասենյակի ղեկավար, երեք խորհրդական, երեք օգնական եւ Մարդասիրական օգնության ծրագրերի վարչություն՝ պետով: Այստեղ նկատենք, որ Տիգրան Խաչատրյանին սպասարկող անձինք նախկինում աշխատել են ֆինանսների նախարարությունում, երբ վերջինս ֆինանսների նախարար էր: Այսինքն՝ դառնալով փոխվարչապետ՝ նա իր կադրերին նախարարությունից բերել է կառավարություն եւ հեռացրել նախկին փոխվարչապետ Համբարձում Մաթեոսյանի կադրերին: Իսկ ինչո՞վ են զբաղված փոխվարչապետները. նրանք բավականին ակտիվ են որոշումներ կայացնելու հարցում, արտոնություններ են տալիս, աշխատակազմին գործուղումների ուղարկում: Եվ այնքան է այդ աշխատանքը նրանց դուր եկել, որ վերջերս արդեն արտոնություն տրվեց նաեւ փոխվարչապետներին: Մասնավորապես, փոխվարչապետների հրավերով ՀՀ ժամանող օտարերկրյա փոխվարչապետների պատվիրակությունների այցելությունների դեպքում այցերի հետ կապված ծախսերի ֆինանսավորումը կիրականացվի՝ պետական արարողակարգի ծառայության ներկայացված հաշվետվության հիման վրա: Նախկինում այս կարգավորումը վերաբերել է միայն նախագահին, վարչապետին եւ ԱԺ նախագահին: Ասել է թե՛ բյուջեի ծախսերը ավելանում են, սակայն դրանց արդյունավետությունը խիստ կասկածելի է:



ԶՐՈՒՅՑ

# ԽԱԺԱԿՅԱՆԸ՝ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթը Երեւանի ավագանու առաջիկա ընտրությունների, Տիգրան Ավինյանին աջակցելու եւ Հայկ Մարությանի մասնակցության վերաբերյալ գրուցել է Երեւանի ավագանու «Լույս» խմբակցության ղեկավար, քաղաքապետի թեկնածու Գավիթ Խաժակյանի հետ:

ԶՊ-ի հետ դաշինքով մասնակցության մասին Խաժակյանը և՛ շեշտեց, որ քաղաքական ուժերի կոնֆիգուրացիաների հարցը դեռ հստակեցված չէ:

«Պարոն Խաժակյան, գիտե՞ք, որ սեպտեմբերին սպասվում են Երեւանի ավագանու ընտրություններ: Դուք եւս թեկնածուներից մեկն եք: Ի՞նչ սպասելիքներ ունեք այս ընտրություններից:

«Ես հանդիսանում եմ ավագանու անդամ արդեն ավելի քան 6 տարի, եւ կուտակվել է մեծ քաղաքային փորձ, եւ կարծում եմ, որ այդ փորձը պետք է շարունակել ծառայեցնել: Ընտրությունները կլինեն մրցակցային, թե ոչ՝ ցույց կտա ժամանակը: Այդուհանդերձ, դրանք լրջագույն քաղաքական բովանդակություն ունեցող ընտրություններ են, բայց նաեւ քաղաքային կոմպոնենտը, եւ համոզված եմ, շատ կարելի է, որովհետեւ մարդիկ ակնկալելու են լսել իրական քաղաքային ծրագրեր այն խնդիրների շուրջ, որոնցով մտահոգված են, իսկ մնացածը ցույց կտա ժամանակը: Մնացել է ընդամենը 2-3 ամիս:

«Պարոն Խաժակյան, գիտե՞ք, ու դա ակնհայտ է, որ թե՛ն քաղաքապետը չի մեկնարկել, բայց ի՛շխող քաղաքական ուժի թեկնածուն՝ Տիգրան Ավինյանը, արդեն սկսել է քարոզարշավը, տարբեր հանդիպումներ է ունենում քաղաքացիների հետ, բացման արարողությունների է մասնակցում, ու տպավորություն է, որ ի՛շխող քաղաքական ուժը արդեն գրավել է Երեւանի ավագանին, ու շատ քաղաքական ուժեր հենց այս պատճառով չեն պատրաստվում մասնակցել ընտրություններին. նրանք կարծում են որ ամեն ինչ արդեն կանխորոշված է: Դուք ինչպե՞ս եք այս իրավիճակը գնահատում:

«Նախ, եկե՛ք արձանագրենք, որ ի՛շխող քաղաքական ուժը քաղաքային իշխանություն գրավելու խնդիր չունի, որովհետեւ 2018-ից ստացել են բացարձակ մեծամասնության մանդատը, եւ մենք հասկանում ենք, որ համամասնական ընտրակարգում քաղաքապետները կարող են փոփոխվել կամ մնալ նույնը՝ այն, ինչ տեղի ունեցավ Երեւանում՝ առնվազն երկու անգամ: Քարոզարշավը, այո, ինչ-որ տեղ մեկնարկել է: Մեկնարկել է բոլոր ուժերի կողմից. հիմա, օրինակ, մենք կարող ենք տեսնել քաղաքային ընտրությունների պաստառներ (չբարձրաձայնեմ ում). եւ եղտեղ խնդիր չեմ տեսնում: Ամեն դեպքում, դա ի՛շխանության պաստառները չեն, մեր պաստառները չեն, բայց դրանք կան: Ես նորմալ եմ գնահատում, որ քաղաքական կուսակցությունները սկսել են իրենց արշավը արդեն վաղ շրջանից եւ ուզում են քաղաքացիների աջակցությունը ստանալ: Հուսանք՝ դա կնպաստի ընտրությունների մրցակցայնությանը եւ մարդկանց ավելի շատ մասնակցությանը: Մնացյալը պետք է լինի օրենքի տրամաբանության շրջանում:

«Պարոն Խաժակյան, տարբեր հարցումներ ցույց են տալիս, որ քաղաքացիները որպես քաղաքապետի թեկնածու գիտեն միայն Տիգրան Ավինյանին: Դուք այս պայմաններում մրցակցային համարում եք ընտրությունները:

«Ես տեղ մեծ է մամուլի դերը: Մամուլը շուրջ մեկ տարի ավելում է, որ Տիգրան Ավինյանը, ընտրվելով փոխքաղաքապետ,



իրականացնում է քարոզարշավ, եւ այնքան այդ անունը շրջանառվեց, թեպետ՝ քննադատական կոնտեքստում, բայց մարդկանց մոտ ֆիքսվեց, որ Տիգրան Ավինյանը թեկնածու է: Բնականաբար, նա միակը չէ, շատ թեկնածուներ կան, բայց ընտրությունների մրցակցայնությունը, կարծում եմ, կախված կլինի այն պատենցիալից, որոնք թիվերը կունենան: Ինչքան էլ որ քաղաքական բաղադրիչը մեծ լինի, այն թիվը, որը հանդես կգա քաղաքային ընտրություններում, պետք է քաղաքի խնդիրներին որոշակիորեն տիրապետի, եւ լուծումներն էլ լինեն ոչ թե հեքիաթային, այլ առարկայական: Հիմա, երբ ես մեր ավագանու կազմի քաղաքական ուժերից դուրս եմ նայում, տեսնում եմ, որ ուժերի մեծ մասն անգամ չի տիրապետում տարրական խնդիրներին ու դրանց լուծումներին, եւ ինձ այդ իմաստով շատ հետաքրքիր կլինի նրանց հետ հրապարակային քննարկումներ, բանավեճեր ունենալ, որպեսզի մարդկանց ցույց տամ, որ ընտրություններին մասնակցելը մի փոքր ավելի լուրջ պատրաստություն է ենթադրում, քան ինչ-որ վերացական թեմաներով ծրագրեր առաջարկելը:

«Դուք մեզ հետ զրույցում տեսական ժամանակ առաջ չէիք հաստատել, բայց նաեւ չէիք բացառել, որ, հնարավոր է, ԶՊ-ի հետ դաշինքային ֆորմատով մասնակցեք: Ասել եք, որ, ամեն դեպքում, հնարավոր է քննարկումներ լինեն սրա շուրջ: Նոր զարգացումներ կամ վերջնական որոշումներ կամ՝ սրա հետ կապված:

«Այս առումով որեւէ փոփոխություն չկա. մենք շարունակում ենք անել մեր աշխատանքը, եւ կարծում եմ որեւէ կոնֆիգուրացիայի հստակեցում ոչ միայն մեր մասով, այլ ընդհանրապես քաղաքական ուժերի, կլինի հույսի վերջին կամ օգոստոսի կեսերին: Մինչ այդ ինձ համար ամենակարեւոր խնդիրը, այն ամենը, ինչ մենք ունենք՝ քաղաքի հետ կապված, դրանք պատշաճ լուսաբանելն է, եւ, օրինակ, ես երեկ տեսանյութ թողարկեցի՝ Մյասնիկյան պողոտայի բեռնաթափումը իրականացնելու հետ կապված, եւ այն շատ լավ արձագանք ստացավ: Ինձ համար կարեւոր է, որ այդ արձագանքը պահպանվի, ու դրա հիման վրա ձեւավորվի պահանջարկ, եւ մենք կարողանանք հենց այդպես լուծել կամ լուծել խնդիրը այլ միջոցներով, բայց, ամեն դեպքում, այդ խնդիրը դառնա օրակարգի մաս: Սա է եղել ինձ համար գլխավոր խնդիրը իմ այսքան տարվա գործունեության ընթացքում, որ նույնիսկ եթե առաջարկված լուծումը լավագույնը չի եղել, դա մտնի քննարկման դաշտ, մտնի օրակարգ, եւ քաղաքային խնդիրները չստվերվեն ավելի մեծ խնդիրներով, որովհետեւ, ի վերջո, քաղաքը շարունակում է ապրել, մարդիկ շարունակում են զգալ այդ խնդիրները, եւ մենք պետք է հասցեագրենք դրանք:

«Այսինքն՝ դեռ չէ՞ք շարունակում բացառել, որ հնարավոր է հանդես գաք դաշինքով:

«Ես բացառեցի այն, ինչը-որ այս պահին բացառելի էր: Մնացյալը քննարկման տիրույթում է, ու որեւէ մեկի համար գաղտնիք չէ, որ մենք ունենք գործընկերային հարաբերություններ տարբեր քաղաքական ուժերի հետ, եւ ասել, որ մենք բացառում ենք համագործակցությունը որեւէ մեկի հետ, իհարկե, կարող է որպես վերնագիր լավ դիտարկվել, բայց դա պրոցեսի մաս է, եւ ես կենտրոնանում եմ մեր անելիքների վրա:

«Իսկ կամ քաղաքական ուժեր, որոնց հետ հստակ գիտեք, որ չեք համագործակցելու ու չեք տեսնում այս դաշինքային ֆորմատը նրանց հետ:

«Այո, եւ ես այդ մասին բազմիցս ասել եմ: Երբ, օրինակ, նայում ենք Հանրապետական կուսակցության գործունեությանը, որ անգամ վերջին ընտրություններին առանձնացավ ընտրակաշառք բաժանելով, նրանց հետ էլ ի՛նչ համագործակցության եզրեր: «Հայաստան» դաշինքը կարծես դադարել է գոյություն ունենալ, ընդհանրապես խոչը չի գնում իրենց առաջադրման մասին: Այս եւ նմանատիպ ուժերի հետ, բնականաբար, համագործակցություն չեմ պատկերացնում: Մնացյալը կոնֆիգուրացիայի հարց է, որովհետեւ, ի վերջո, մենք ունենք նաեւ հետընտրական շրջան, որտեղ տարբեր զարգացումներ կարող են լինել, եւ ինչպիսի գարգացում էլ լինի, շատ կարեւոր է, որ մենք կարողանանք ձեւավորել ժողովրդի վստահությունը վաստակող ավագանի, որը կկարողանա միմյանց հետ աշխատել:

Ջրույցը ԶՊ-ի ՄԱՍԻՆ ԱՄՈՒՆԵՆԵՐԻ ՄԱՍԻՆ



## ԱՐԵՎԱԼՈՒՅՄՆԵՐԸ ԽԱՂԱՂ ՉԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ արշալույսները խաղաղ չեն ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում:

ԲԴԻՆ նախագահ Կարեն Անդրեասյանը գնացել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան ու դատարանի դատավորների որոշ մասի հետ ժամերով փակվել, ներքին քննարկում իրականացրել:

Մասնավորապես, մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ ներքին քննարկման ժամանակ ԲԴԻՆ նախագահ Կարեն Անդրեասյանը Վերաքննիչ քրեական դատարանի որոշ դատավորների հասկացրել է, թե իրեն հատկապես Վերաքննիչ քրեական դատարանում պետք է մեկ անձ, որը կհամակարգի ողջ դատարանի աշխատանքը:

Թե ինչ քվեարկություն է եղել, պարզ չէ, բայց դատարանի շատ դատավորների համար զարմանալի կերպով Վերաքննիչ քրեական դատարանի համակարգող կամ ԲԴԻՆ Կարեն Անդրեասյանի աջք ու ակնաջներ ծառայող դատավոր է ընտրվել Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Ռուբիկ Մխիթարյանը:

Նշենք, որ Ռուբիկ Մխիթարյանն այն դատավորն էր, որին ԲԴԻՆ նախագահ Կարեն Անդրեասյանը ցանկանում էր դարձնել ԲԴԻՆ անդամ, սակայն, ի հեճուկս իր ցանկությունների, ԲԴԻՆ անդամ ընտրվեց Վերաքննիչ քրեական դատարանից դատավոր Արշակ Վարդանյանը: Հիմա ամենակարեւորի մասին. ինչո՞ւ է Կարեն Անդրեասյանը որոշել Վերաքննիչ քրեական դատարանում իր հավատարիմ մեկին ունենալ: Բանն այն է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի նախագահ Մխիթար Պապոյանին չեն կարողանում վերահսկողության տակ պահել եւ, ըստ էության, Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանում իրենց ցանկալի որոշումները ունենալ, ուստի որոշել են Մխիթարյանի միջոցով իրավիճակը հսկել:

Իսկ թե ինչ քրեական գործերով է, որ չեն կարողանում ազդել Վերաքննիչ քրեական դատարանի նախագահի վրա, մանրամասները կներկայացնենք առաջիկայում:

## ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆՆ ԸՆԴ ԳԵՄՊԱՆԸ

Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի նախաձեռնությամբ իր առանձնատանը տեղի է ունեցել հանդիպում Հայաստանում ՌԴ արտակարգ եւ լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինի հետ:

Այս մասին հայտնում է առաջին նախագահի խոսնակ Արման Մուսինյանը:

Ջրույցի ընթացքում անդրադարձ է կատարվել Հայաստանի եւ Արցախի հասարակություններին հուզող գրեթե բոլոր խնդիրներին:

ՏՐԱՆՍՊՈՐՏԻՑ ԳԺԳՈՂ ԵՆ



Հայաստանում տրանսպորտային նոր փոխադրամիջոցների ավելացման ու վերափոխման ֆոնին՝ մայրաքաղաքում դեռեւս շարունակում են բողոքել տրանսպորտների՝ ոչ պատշաճ աշխատելանճից:

«Ժողովուրդ» օրաթերթի խմբագրությունը բազմաթիվ բողոքներ է ստանում կապված երթուղային ցանցի տարբեր համարների վատ աշխատանքի հետ: Մասնավորապես, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի մաս կազմող «Հաղթանակ» (4-րդ գյուղ) թաղամասի բնակիչները ահազանգում են 53 համարի ավտոբուսներն ու 77 համարի միկրոավտոբուսները իրենց աշխատանքում թերանում են:

Քաղաքացիների խոսքով՝ 20:00-ից սկսած՝ գրեթե անհնար է դառնում թաղամաս գնալը, քանի որ 53 համարի ավտոբուս բացարձակ գոյություն չունի այդ ժամերին, իսկ 77-ին սպասելը կարող է ողջ հավերժություն ձգվել: Երթուղային տաքսիներով ամեն օր երթելու էլ խելամուտության ժանրից չէ:

Այս թեմայի շուրջ «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց մեկնաբանություն ստանալ երթուղիները սպասարկող վարորդներից: Վերջիններիս խոսքով՝ թերության պատճառը 53 համարի երթուղու ավտոբուսների քանակի անբավարարությունն է, դե իսկ 77-ը ունի 13 միկրոավտոբուս, իսկ թերացման պատճառը գծի երկարությունն է:

«Ժողովուրդ» օրաթերթին Երեւանի քաղաքապետարանի լրատվության վարչությունից տեղեկացրին, որ 77 համարի երթուղին մասնավոր է. սպասարկում է «Երեւանտրանս» ՓԲԸ-ն: Այդուհանդերձ, քաղաքապետարանից տեղեկացրին, որ առաջիկայում նախատեսվում է մինչեւ սեպտեմբերի 1-ը կասեցնել մասնավոր ընկերությունների կողմից սպասարկվող միկրոավտոբուսները՝ «գազել»-ները, այդ թվում՝ 77 համարի երթուղին: Քաղաքապետարանի լրատվության վարչությունը կապ է հաստատել նաեւ «Երեւանտրանս» ընկերության ղեկավար կազմի հետ, որտեղից խոստացել են բարելավել միկրոավտոբուսների աշխատանքը, երկարացնել աշխատանքային ժամերը, մինչեւ կավելացվեն նոր ավտոբուսներ 53 համարի երթուղում, եւ կկարգավորվի ավտոբուսների աշխատանքը:

Վարչությունից խոստանում են՝ շուտով բնակիչները կզգան ակնհայտ փոփոխությունը:

ՄԱՐԻԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ՆԻՍ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ՝ ՍՈՉԻՈՒՄ

Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը Մոզիում մասնակցել է ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդի հերթական նիստին:

Վարչապետի աշխատակազմի տարածած հաղորդագրությունից պարզ է դառնում, որ Նեղ կազմով նիստում վարչապետ Փաշինյանը հանդես է եկել ելույթով, որում, մասնավորապես, նշել է.

«Պատվիրակությունների հարգելի՛ ղեկավարներ,

Հարգելի՛ Սերգեյ Նիկոլայի,

Ուրախ եմ ողջունել գործընկերներին ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդի նիստում: Առաջին հերթին ցանկանում եմ շնորհակալություն հայտնել մեր ռուս ընկերներին եւ անձամբ Միխայիլ Վլադիմիրիին՝ ավանդաբար ջերմ ընդունելության եւ այսօրվա հանդիպումը բարձր մակարդակով կազմակերպելու համար:

Ընդհանուր առմամբ, դրական եմ գնահատում համագործակցության շրջանակներում այս տարի կատարված աշխատանքը՝ համագործակցության ամրապնդման ուղղված ջանքերի համախմբման տեսանկյունից: Նաեւ գոհուհուրությամբ նշեմ, որ այսօրվա հանդիպման օրակարգում ընդգրկված փաստաթղթերի ցանկն ընդգրկում է մեր երկրների կենսագործունեության լայն շրջանակ, որոնց արդյունավետ իրականացումը, ի վերջո, ուղղված է փոխշահավետ համագործակցության հետագա զարգացմանը՝ ի շահ ԱՊՀ անդամ պետությունների քաղաքացիների բարեկեցության եւ կյանքի որակի բարելավման:

Հայաստանի Հանրապետությունը համարում է «Ծառայությունների ազատ առեւտրի, Ներդրումների հիմնադրման, գործունեության եւ իրականացման մասին» համաձայնագիրը մեծ հնարավորություն ԱՊՀ անդամ երկրներում ներդրումային գործունեության զարգացմանը նոր թափ հաղորդելու համար եւ իր պատրաստակամությունն է հայտնում սույն համաձայնագրի դրույթների գործնական կիրառման առումով:

Մեր առջեւ ծառայած կարելու խնդիրներից է մեր երկրների տնտեսվարող սուբյեկտների միջեւ արդյունաբերական ստեղծարարության կապերի ակտիվացման եւ փոխգործակցության համար նպաստավոր պայմանների ստեղծումը՝ նորարարական արդյունաբերական կլաստերներ



րի եւ գիտաարտադրական գոտիների ձեւավորման նպատակով:

Գիտելիքի ինտենսիվ նոր ճյուղերի ստեղծումը եւ բարձր տեխնոլոգիական արդյունաբերական ներուժի արդիականացումը հիմնական գործոնն է կայուն եւ նորարար տնտեսական զարգացման հասնելու համար, ինչպես նաեւ մեր տնտեսությունների մրցունակության բարձրացման համար անհրաժեշտ պայման: Այս համատեքստում ուզում եմ նշել Արդյունաբերական համագործակցության զարգացման հայեցակարգի եւ միջոցառումների համալիրի ընդունման կարելուրությունը:

Գիտելիքահեղին ինտենսիվ նոր ճյուղերի ստեղծումը եւ բարձր տեխնոլոգիական արդյունաբերական ներուժի արդիականացումը կայուն եւ նորարար տնտեսական զարգացմանը հասնելու հիմնական գործոնն է, ինչպես նաեւ մեր տնտեսությունների մրցունակության բարձրացման անհրաժեշտ պայմանը: Այս համատեքստում նշեմ Արդյունաբերական կոոպերացիայի զարգացման հայեցակարգի եւ միջոցառումների համալիրի ընդունման կարելուրությունը:

Գիտական եւ տեխնոլոգիական արագ առաջընթացի ֆոնին աստիճանաբար

ավելի են սրվում բնապահպանական խնդիրները, եւ շրջակա միջավայրի համար ռիսկերը նվազեցնելու արդյունավետ մեխանիզմների ստեղծման պահանջարկը մեծանում է: Հետեւաբար, խաղաղ նպատակներով էկոլոգիապես մաքուր միջուկային էներգիայի զարգացումը էական նշանակություն ունի կայուն զարգացում ապահովելու եւ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու համար:

Այս համատեքստում հայկական կողմն աջակցում է Ռադիացիոն իրավիճակի մոնիտորինգի նպատակով տվյալների փոխանակման ոլորտում համագործակցության համաձայնագրի ստորագրմանը, որն ուղղված է ոչ էներգետիկ նպատակներով, մասնավորապես՝ գիտության, բժշկության եւ գյուղատնտեսության ոլորտներում միջուկային տեխնոլոգիաների օգտագործման մեխանիզմների օպտիմալ մոտեցումների մշակմանը:

Վարչապետ Փաշինյանը ԱՊՀ գործընկերների հետ շրջայց է կատարել նաեւ «Եվրասիա» մեր տուն» խորագրով ցուցահանդեսի տաղավարներով, ծանոթացել ԱՊՀ պետությունների ընկերությունների արտադրությանը՝ տարբեր ոլորտներում:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՈՒՂԱՐԿՎԵԼ Է ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթն արդեն հայտնել էր, որ Փարաքար խոշորացված համայնքի թափով գյուղում, արդեն երկար ժամանակ է, չունեն խմելու ջուր: Բնակիչների խոսքով՝ ամռան ամիսներին անհնար է ծորակից ջուր խմել, քանի որ այս շրջանում խմելու ջուրը փոխարինում են արտեզյան ջրով, ընդ որում՝ չափից շատ քլորի պարունակությամբ: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում թափուրի բնակիչները նշեցին, որ անորակ ջրի պատճառով գյուղի բազմաթիվ երեխաներ ունեն աղիքային խնդիրներ, փորլուծություն, մի քանիսն էլ գտնվում են հիվանդանոցում:

Բնակիչներն այս խնդրով բազմիցս բողոքել են տարբեր պատկան մարմինների, սակայն որեւէ արդյուք չի եղել, իսկ «Վիո-

լա ջուր» ընկերությունից բնակիչներին պատասխանել են, որ ջուրը համապատասխանում է չափանիշներին, իսկ արտեզյանը խառնում են խմելու ջրին, քանի որ այն չի բավականացնում բնակիչներին:

«Ժողովուրդ» օրաթերթի տեսախցիկը ֆիքսել է նաեւ ջրի գույնը՝ դեղնավուն: Բնակիչները մեզ հայտնեցին, որ այս ջուրը ուղարկվել է փորձաքննության. սպասում են պատասխանին:

ԿԱՅԱՆՈՒՄԸ ԿԱՐԳԵԼՎԻ

Երեւանի քաղաքապետարանը հայտարարություն է տարածել, որով տեղեկացնում է, որ իրականացվելու են Հերացու փողոցի (դեպի կենտրոն ուղղության) գրպանիկների փակման աշխատանքներ, որոնցով պայմանավորված՝ սույն թվականի հունիսի 9-ից արգելվելու է տրանսպորտային միջոցների կայանումը:

Նի հունիսի 9-ից արգելվելու է տրանսպորտային միջոցների կայանումը:

Հայտարարության մեջ ասված է.

«Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության եւ բարեկարգման վարչության կողմից ուսումնասիրվել են Հերացու փողոցի ճանապարհային երթելուության կազմակերպման եւ կառավարման առկա խնդիրները, տրանսպորտային միջոցների դժվարանցանելիության պատճառները, առաջին եւ երկրորդ երթելուելի գոտիներում կայանման հարուցած բարդությունները եւ այլն:

Նշված խնդրի լուծման նպատակով նախատեսվում է իրականացնել Հերացու փողոցի (դեպի կենտրոն ուղղության) գրպանիկների փակման աշխատանքներ, որոնցով պայմանավորված՝ սույն թվականի հունիսի 9-ից արգելվելու է տրանսպորտային միջոցների կայանումը»:

ԲԱՑԱՌԻԿ

ԻՐԱՎԱՊԱՐԿՆԵՐԸ ԵՆ ՍՏՈՒՄ, ԹԵ՞ ԹԱՂԱՊԵՏԸ

Պարզվում է Գավիթաբերի վարչական շրջանի ղեկավար Ռոման Համբարձումյանի օգնական Կորյուն Մխիթարյանի վրա կրակել են ոչ թե անճանաչան խնդիրների դասճանաչով, այլ քանի որ նա թաղապետ Ռոման Համբարձումյանի օգնական է եւ քաղաքացիների հետ ըստ էության հարաբերվել է փողոցային կանոններով:



Նախ ամենակզբից. 2023 թվականի մայիսի 19-ին՝ ժամը 09:00-ի սահմաններում, Բաշինջաղյան փողոց եւ Բաշինջաղյան փակուղի խաչմերուկում հիշյալ 30-ամյա տղամարդը, 36-ամյա տղամարդու եւ մի խումբ անձանց հետ դարանակալելով «Վոլկվազեն տուարեզ» մակնիշի ավտոմեքենային, որի ղեկին եղել է թաղապետի օգնական Կորյուն Մխիթարյանը, իրենց մոտ գտնվող մահակներով վնասել են հիշյալ ավտոմեքենան, իսկ 30-ամյա տղամարդն իր մոտ գտնվող հրազենով կրակել է ավտոմեքենայի ուղղությամբ, որի հետեւանքով թաղապետի օգնականի թիկունքային հատվածում պատճառվել է մարմնական վնասվածք:

Ջանի համար, քանի որ թաղապետի տեղակալ Հրաչ Հակոբյանը վստահեցնում է, որ թաղապետի օգնական Կորյուն Մխիթարյանը քաղաքացու հողակտորի պատմության հետ որեւէ կապ չի ունեցել: Հարց է առաջանում ինչո՞ւ կրակեցին թաղապետի օգնականի վրա: Ի վերջո, նախաքննական մարմինը պաշտոնապես հայտնել էր, որ դեպքից մոտ 2-3 ամիս առաջ նախորդել է հողակտորի հարցի շուրջ վիճաբանություն, ու այս իրավիճակում հարց է առաջանում թաղապետարանը կամ թաղապետ Ռոման Համբարձումյանն է ինչ-որ բան թաքցնում, թե՞ ՀՀ քննչական կոմիտեն է պաշտոնապես սուտ տեղեկություն տարածում:

ՔՆՍՐ ՍՍՆՈՒԿՅԱՆ

ՄԱՆՐԱՄԱՆԵՐ

ԴԱՆԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ՓԱՐԱՔԱՐՈՒՄ

ՆԳՆ ոստիկանությունը մանրամասներ է հայտնել հունիսի 3-ի գիշերը Փարաքարում տեղի ունեցած դանակահարության մասին: Տարածած հաղորդագրության մեջ ասված է. «Հունիսի 3-ի գիշերը ոստիկանության Վարդաշապատի բաժին հիվանդանոցից հաղորդում ստացվեց: Հայտնել են, որ ժամը 1-ին մոտ կտրած-ծակած, թափանցող վերքերով բուժօգնության է տեղափոխվել Փարաքար գյուղի 23-ամյա մի բնակիչ: Բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումներն արագ արդյունք են տվել: Պարզվել է, որ կենդանի մոտ կրակահերթի մարզի Փարաքար գյուղի Մարտի 8-ի փողոցում վիճաբանել են տուժածն ու նրա 22-ամյա համագյուղացին: Վեճը վերաճել էր ծեծկռտուքի, ինչի ընթացքում էլ 22-ամյա երիտասարդը դանակով հարվածներ էր հասցրել: Գիշերվա ժամը 3-ին նա հայտնաբերվել, ձերբակալվել ու ներկայացվել է Վարդաշապատի քննչական բաժնի, որտեղ էլ տվել է խոստովանական բացատրություն: Դատարանի՝ հունիսի 5-ի որոշմամբ՝ նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանքը: Ձեռնարկվում են միջոցառումներ՝ հանցագործության գործիքը հայտնաբերելու ուղղությամբ: Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

ՄԱՆՐԱՄԱՆԵՐ՝ ԱՐԱԳԱԾԱՎԱՆԻ ՄԻՋԱԳԵՊԻՑ

ՀՀ քննչական կոմիտեից տեղեկացնում են՝ 2023թ հունիսի 7-ին Ոստիկանության Թալինի բաժնում հաղորդում է ստացվել այն մասին, որ նույն օրը՝ ժամը 19.00-ի սահմաններում կրագածական բնակավայրում գտնվող ավտոմեքենաների վրա մոտ ծագած վիճաբանության ընթացքում, բնակավայրի բնակիչ Ս. Թ.-ն գազաբալոնով գազ է փչել նույն բնակավայրի բնակիչ, 24-ամյա Ա.Ս.-ի դեմքին, փայտով հարվածներ հասցրել վերջինիս մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով մարմնական վնասվածք: Վերջինս ստացել է ամբուլատոր բուժօգնություն: Դեպքի առթիվ ՀՀ ՔԿ կրագածոտնի մարզային քննչական վարչության Թալինի քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մասով, նախաձեռնվել է քրեական վարույթ: 2023թ. հունիսի 8-ին՝ ժամը 00.15-ին, Ս. Թ.-ն ոստիկանության աշխատակիցների կողմից ներկայացվել է Թալինի քննչական բաժնի: Որոշում է կայացվել, հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով, ներկայացվել է մեղադրանք: Միջնորդություն է ներկայացվել դատարան՝ նրանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ, որոնցից 2-ի մասով բավարարվել է, մեկի մասով՝ մերժվել: Վերջինիս նկատմամբ խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը: Նախաքննությունը շարունակվում է: Ծանուցում. հանցանքի համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի որ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում քննություն է սարվում Գյուլագարակ բնակավայրի մի խումբ բնակիչների կողմից դարձնելով ծառայողների օրինական ծառայողական գործունեությանը միջամտելու դեպքի բոլոր հանգամանքները պարզելու ուղղությամբ:

Ավտոմեքենան կայանելով այգի բարձրացող ճանապարհի մոտ՝ կայանատեղում, 24-ամյա երիտասարդը եւ նրա համագյուղացիները պարզաբանումներ կատարելու նպատակով մոտեցել են ոստիկանության ծառայողներին:

Կասկածելով, որ նշված երիտասարդն ավտոմեքենան վարել է ոչ սթափ վիճակում պարեկները նրա սթափության վիճակը ստուգելու նպատակով իրականացրել են անձի նույնացում, ինչից վրդովվելով՝ այդ անձինք միջամտել են իրավապահների գործունեությանը, սպառնացել են օրինական ծառայողական պարտականությունները կարտաբող պարեկներին, բռնություն գործադրել նրանցից մեկի նկատմամբ:

Անձանց ոչ իրավաչափ գործողությունները կանխելու նպատակով պարեկներից մեկը պղպեղային օդամղիչ է փչել 34-ամյա տղամարդու ուղղությամբ, որից հետո նշված անձինք քաջջլել են Ոստիկանության ծառայողներին, իսկ նրանցից մեկը, պարեկի ձեռքում գտնվող պղպեղային օդամղիչը շրջելով վերջինիս ուղղությամբ, այն փչել է նրա դեմքին:

Տեսնելով, որ 24-ամյա երիտասարդը շարունակում է ագրեսիվ պահվածքը եւ չի ենթարկվում իրեն ներկայացված պահանջներին՝ պարեկներից մեկը փորձել է ձերբակալել նրան, ինչը տեսնելով՝ 41-

ամյա տղամարդը իրել է պարեկին, որի հետեւանքով վերջինս ընկել է գետնին, իսկ 24-ամյա երիտասարդը, օգտվելով այդ հանգամանքից, դիմել է փախուստի: Վերջինս ավելի ուշ հայտնաբերվել է ներկայացվել է վարույթն իրականացնող մարմնին:

Ձեռք բերված փաստերի հիման վրա՝ միջադեպին մասնակից անձանցից երեքի նկատմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 3-րդ մասով, հարուցվել է հանրային քրեական հետապնդում:

Նրանք ձերբակալվել են՝ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով, ներկայացվել է մեղադրանք:

Միջնորդություն է ներկայացվել դատարան՝ նրանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ, որոնցից 2-ի մասով բավարարվել է, մեկի մասով՝ մերժվել: Վերջինիս նկատմամբ խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը:

Նախաքննությունը շարունակվում է: Ծանուցում. հանցանքի համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի որ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

● Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 7-ից 8-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 75 դեպք, որոնցից 1-ը՝ նախկինում կատարված:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԵՆԵՐԸ ԿԲՈՒԺՎԵՆ, ԿՄՏԵՐՉԱՑՎԵՆ

Թափառող, անտեր շների կողմից մարդկանց, այդ թվում երեխաների վրա հարձակումների դեպքեր են եղել Տավուշի մարզի քաղաքներում և գյուղական բնակավայրերում: Նախկին տարիներին թափառող, անտեր շների վնասազերծման հարցը լուծվում էր որսորդական միությունների անդամների կողմից անտեր, թափառող շներին գիշերային ժամերին հրազենով ոչնչացնելու միջոցով: Այդ նպատակով համայնքների բյուջեներից գումարներ էին հատկացվում, համայնքապետարանները բնակչությանը նախապես զգուշացնում էին նախատեսված գործողության մասին՝ խնդրելով չանհամապատասխան գիշերները հնչող կրակոցներից: 2018 թվականի իշխանափոխությունից հետո Հայաստանի համայնքներում այլևս թափառող, անտեր շներին հրազենով չեն ոչնչացնում: Թափառող շների խնդիրը հատկապես սրված է Տավուշի մարզկենտրոն Իջեւան քաղաքում, ուր անտեր, թափառող շների կողմից հարձակման բազում դեպքեր են եղել ինչպես չափահասների, այնպես էլ երեխաների նկատմամբ: Իջեւանի կենտրոնական փողոցներում կարելի է տեսնել խմբերով թափառող անտեր շների: Իջեւանի համայնքապետարանը թափառող, անտեր շների դեմ պայքարի ծրագիր է իրականացնում: Իջեւան խոշոր համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանից տեղեկացա, որ համայնքապետարանը պայմանագիր է կնքել Հայաստանի շների խնամքի կենտրոններից մեկի հետ, որը պետք է Իջեւան համայնքի անտեր, թափառող շներին բուժի և ստերոիդներից: Հունիսի 5-ից համայնքում սկսվել է այդ շների հավաքագրումը, համապատասխան հետազոտություններից հետո հարկ եղած դեպքում հիվանդ շները կստանան համապատասխան բուժում, որից հետո ազատ կարձակվեն համայնքի տարածքում: Շները չեն վնասվելու, դրանք բուժվելու, ստերոիդացվելու են: Ստերոիդացված շները ծագել են ունենում, չեն բազմանում, խմբեր չեն կազմում, ինչը անհամապատասխան է պատճառում Իջեւան համայնքի բնակիչներին: Իջեւան համայնքի ղեկավարն ասաց, որ համայնքի բյուջեի 3 միլիոն դրամով առաջիկայում կբուժվի, կստերոիդացվի թափառող, անտեր 100 շուն:

ՈՉԻՆՉ ՉԱՍՈՂ ՊԱՏԱՄԻԱՆ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում են ուղարկել՝ նրան հարցնելով, թե աշխատանքային ինչ նվաճումների, ձեռքբերումների համար են Տավուշի մարզպետարանի պաշտոնյաները պետական բյուջեից տասնյակ միլիոնավոր դրամների պարգևավճարներ ստանում: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով՝ ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի պահպանման ծախսերում նախատեսվել են պարգևավճարներ, որը «Պետական պաշտոններ են պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան՝ տրամադրվում է աշխատակիցներին»:

ՈՍՎԻՍ ՍՈՐՈՍՅԱՆ Տավուշ

ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «ՍոուլՄի» ՏՏ կազմակերպության միջև կնքվել է համագործակցության հուշագիր՝ թվային թեխնոլոգիաների կիրառման միջոցով սպորտը զարգացնելու նպատակով:

Հուշագիրը ստորագրել են ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը և «ՍոուլՄի» ՏՏ կազմակերպության հիմնադիր տնօրեն Պավել Խաչատրյանը:

Կողմերի միջև նախատեսվում է համագործակցություն՝ սպորտային միջոցառումների ընթացքում կիրառելով թվային տեխնոլոգիաների լուծումներ, ինչպես նաև նախատեսվում է համատեղ ծրագրերի մշակում թվային տեխնոլոգիաների միջոցով դեռահասների և պատանիների շրջանում սպորտի նկատմամբ հետաքրքրության բարձրացման ու սպորտի մասսայականացման նպատակով:

«ՍոուլՄի»-ն հայկական ՏՏ սթարթափ է, որը ստեղծում է թվային հիշողություններ: Ընկերության կողմից արդեն իսկ ստեղծվել են մարզիկների անհատական թվային քարտեր, որտեղ QR կոդերի միջոցով մարզիկներն ու երկրպագուները հնարավորություն կունենան ստեղծելու և պահպանելու տեսանյութեր ու այլ մեդիաարտադրանք: Ստեղծվել են նաև սթարթափեր, որոնք ԿԳՄՍ նախարարության կողմից կազմակերպված առաջնությունների ու մրցաշարերի ժամանակ փակցվելու են գավաթների ու դիպլոմների վրա՝ մարզիկին թողնելով նաև վիդեո հիշողություններ առաջնության ամբողջ ընթացքից:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը կարեւորել է մարզիկների հանրահռչակման գործընթացը, որն այսուհետ իրականացվելու է նաև նորարարական լուծումներով:

«Շուտով կընդունվի Հայաստանի սպորտի զարգացման ռազմավարությունը, որի ինտեգրացիայի դրույթներից մեկը մարզիկների հանրահռչակումն ու նրանց հեղինակության բարձրացումն է: Մեր մարզիկները պետք է ավելի ճանաչվեն



լինեն՝ օրինակ ծառայելով երեխաներին: Այս նորարարական հանրահռչակման մեթոդը կծառայի այդ նպատակին: ՈՐ կողով, հեռախոսի սքանավորման միջոցով մարզիկն իր մոտ կունենա այսպես կոչված ալբոմ, որը ցանկացած պահի կլինի հասանելի: Երկրպագուները նույնպես կկարողանան իրենց մոտ պահել մարզիկների հետ իրենց լուսանկարները, դրանք հրապարակել սոցիալական կայքերի էջերում»,- ընդգծում է Կարեն Գիլոյանը:

«ՍոուլՄի» թվային քարտերը փորձական տարբերակով առաջին անգամ փորձարկվել են Երեւանում անցկացված ծանրամարտի Եվրոպայի առաջնության ժամանակ:

Պավել Խաչատրյանի ընդգծում է՝ իրենք առաջարկում են անհատականացված լուծումներ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են կրթությունը, սպորտը, մշակույթը և բիզնեսը՝ առաջնահերթ

թությունը տալով այս ոլորտների միջոցառումների թվայնացմանը:

«Թվայնացնում ենք սպորտային միջոցառումների կազմակերպման և անցկացման գործընթացները՝ գրանցումից մինչև տեղեկատվության տրամադրում, մասնակիցների միջև ինտերակտիվ հաղորդակցությունից մինչև հետադարձ կապի ստացում: Ֆիզիկական ատրիբուտները՝ մեդալներ, գավաթներ, դիպլոմներ, պարգևներ, կրծքանշաններ, տաղավարներ և այլն, նույնպես թվայնացվում են:

Այսպիսով, առավելագույնի է հասցվում միջոցառումների արդյունավետությունը՝ հնարավորություն տալով կազմակերպիչներին հավաքագրել տվյալներ հետազոտում վերլուծելու և միջոցառումների քարոզչության նպատակով, իսկ մասնակիցներին՝ ստանալու լավագույն տպավորություններ»,- նշում է Պավել Խաչատրյանը:

ԱՆՑՈՒՂԱՐԶ

ԱՆՆԱԽԱԳԵՊ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ՝ ՖԵՂԵՐԱՑԻԱՆԵՐԻՑ

Կառավարությունն իր հունիսի 8-ի նիստում որոշեց ԿԳՄՍ նախարարության՝ 2023-ի հաստատված բյուջեի ավելացնել 358,353 մլն դրամով՝ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին:

Որոշման նախագիծը բխում է թվով 11 ՀՀ մարզական ֆեդերացիաներին և Երեւանի շախմատի ֆեդերացիային լրացուցիչ գումար տրամադրելու անհրաժեշտությունից 2023-ի Եվրոպայի և աշխարհի առաջնություններին մարզիկների լավագույն մարզավիճակում մասնակցության ապահովման, ինչպես նաև միջազգային վարկանիշային մրցաշարերի կազմակերպման և անցկացման համար:

Լրացուցիչ ֆինանսավորմամբ ֆեդերացիաները Հայաստանում կկազմակերպեն միջազգային մրցաշարեր և առաջնու-

ԱՆՑՈՒՂԱՐԶ

թություններ, Եվրոպայի և աշխարհի առաջնություններին և վարկանիշային մրցաշարերին լավագույնս նախապատրաստվելու համար կկազմակերպեն ուսումնամարզական հավաքներ, այդ թվում համատեղ ուսումնամարզական հավաքներ այլ երկրների հավաքականների հետ: Բացի այդ, ֆեդերացիաները կմասնակցեն միջազգային մրցաշարերին՝ ավելացնելով Եվրոպայի և աշխարհի առաջնությունների մասնակիցների թիվը:

ԿԳՄՍ փոխնախարար Արա Խզվալյանը նկատեց, որ 2022-ին ֆեդերացիաներին հատկացվել է լրացուցիչ 200 մլն դրամ, որով հնարավորություն տրվեց մարզիկներին մասնակցել ավելի մեծ թվով հավաքների և մրցաշարերի. «Արդյունքները եղան աննախադեպ. նվաճեցինք 307 մեդալ՝ նախորդ տարվա 199 մեդալի փոխարեն, իսկ, ընդհանուր առմամբ, այս թիվը 30 տոկոսով բարձր է մեր երբեք ունեցած ամենաբարձր ցուցանիշից:

Նկատել է, որ 2023-ը նախաօլիմպիական տարի է, և կարելու են աշխարհի և Եվրոպայի առաջնությունները, որտեղ խաղարկվելու են «Փարիզ-2024» օլիմպիական խաղերի վարկանիշները:

ԱՆՑՈՒՂԱՐԶ

Փրկարար ծառայությունը տեղեկացնում է, որ ՀՀ տարածքում ավտոճանապարհներն անցանելի են:

ԱՆՑՈՒՂԱՐԶ

Փրկարար ծառայությունը տեղեկացնում է, որ ՀՀ տարածքում ավտոճանապարհներն անցանելի են:

Հունիսի 1-ից, հիմնանորոգման աշխատանքներով պայմանավորված, վավեր դի-Սանահին-Սարահարթ ճանապարհատվածին գործում են երթուղիների սահմանափակումներ:

Լարսի մասին Կրաստանի ՆԳՆ ԱԻ դեպարտամենտից և ՌԴ ԱԻՆ Հյուսիսային Օսիայի ճգնաժամային կառավարման կենտրոնից ստացված տեղեկատվության համաձայն՝ Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհը բաց է բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների համար:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 15 ճՏՊ. 2 մարդ զոհվել է, 15-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԸՄՔԵԱՄԱՐՏ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



Երեւանում հունիսի 14-17-ը կանցկացի ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ, օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր, Եվրոպայի չեմպիոն Ստեփան Սարգսյանին նվիրված ազատ ոճի ըմբշամարտի 25-րդ միջազգային մրցաշարը:

Կառավարությունն ընդունել է որոշում մրցաշարի կազմակերպման եւ անցկացման նպատակով շուրջ 50 միլիոն դրամ տրամադրելու վերաբերյալ:

Ըստ նախագծի հիմնավորման՝ վերջին տարիներին ազատ ոճի ըմբշամարտ մարզաձեւը զբաղեցրել է մեծ հաջողություններ. 2023 թ. Եվրոպայի չեմպիոն են դարձել Արսեն Զարուբյանյանը եւ Վազգեն Թեւանյանը, 2022 թ. երիտասարդների եւ մինչեւ 23 տարեկանների աշխարհի չեմպիոն՝ Արսեն Զարուբյանյանը, Վազգեն Թեւանյանը, եւ երիտասարդների Եվրոպայի հաղորդներ դարձան Սուշեղ Սկրտչյանը, Լյուկա Գեորգյանը:

Հաշվի առնելով այս բոլոր հանգամանքները, ինչպես նաեւ Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի ավանդույթները եւ զարգացման ուղիները՝ միջազգային ֆեդերացիան առաջարկել է Հայաստանում անցկացնել Ստեփան Սարգսյանին նվիրված ազատ ոճի ըմբշամարտի միջազգային մրցաշարը: Միջազգային մրցաշարին ակնկալվում է շուրջ 15 երկրի 140 մասնակիցների մասնակցություն: Միջազգային մրցաշարի անցկացումն իր կարելու տեղն ունի մարզաձեւի զարգացման եւ մասսայականացման գործում, ինչի արդյունքում Հայաստանի Զանրապետությունն ավելի ճանաչելի կդառնա միջազգային մարզական հարթակներում որպես առաջատար երկիր՝ ապահովելով երկրի մարզական հեղինակության բարձրացումը, Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդումը:

Միեւնույն ժամանակ այն կնպաստի մշակութային արժեքների եւ տուրիզմի զարգացմանը, այդ թվում՝ հյուրանոցային, մշակութային կենտրոնների եւ մարզական կառույցների վերականգնմանը՝ իր հերթին նպաստելով տնտեսության համընթաց զարգացմանը:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՆԱՄԵԾ ԱՐՏԱՀԱՆՈՒՄՆԵՐԸ

Հայաստանն այս օրվա հունվար-ապրիլին արտահանել է 2 մլրդ 158 մլն 463.4 հազար դոլարի արհմեք, ինչը նախորդ օրվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ աճել է 2.1 անգամ. ամենամեծ ծավալի արտահանումն իրականացվել է Ռուսաստան: Իսկ ինչ վերաբերում է ադրանդաբանությանը, ապա արտահանման ծավալներում ամենամեծ մասնաբաժինն ունեն քանկարժեք եւ կիսաքանկարժեք քարերը, քանկարժեք մետաղներն ու դրանցից դասրասված իրերը:

Այս մասին են վկայում Վիճակագրական կոմիտեի հրապարակած ցուցանիշները:

Այս տարվա առաջին 4 ամսում դեպի ԵԱՏՄ երկրներ արտահանումը կազմել է 1 մլրդ 109 մլն 873.2 հազար դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 3.8 անգամ, իսկ դեպի ԵՄ երկրներ՝ 234 մլն 989.7 հազար դոլար. նախորդ տարվա առաջին 4 ամիսների նկատմամբ այս ցուցանիշը նվազել է 9.5 տոկոսով:

Ամենամեծ ծավալի արտահանումն իրականացվել է Ռուսաստան՝ 1 մլրդ 64 մլն 44.8 հազար դոլարի, ինչը 2022-ի հունվար-ապրիլ ամիսների համեմատ՝ ավելացել է 3.8 անգամ: Արտահանման ծավալներով երկրորդ տեղում Արաբական Միացյալ Էմիրություններն են. այս տարվա հունվար-ապրիլին Հայաստանը ԱՄԷ է արտահանել 372 մլն 641.8 հազար դոլարի արտահանք. աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, 8.9 անգամ է: Երրորդ տեղում Չինաստանն է: Հայաստանից Չինաստան արտահանումն այս տարվա չորս ամիսների կազմել է 135 մլն 017.4 հազար դոլար՝ 2022-ի նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 20.1 տոկոսով:

Աճել են նաեւ Հայաստանից դեպի հարևան երկրներն ու Իրան արտահանման ծավալները: Հայաստանից Կրաստան արտահանումը 4 ամսում կազմել է 51 մլն 502.1 հազար դոլար, աճը 46.1 տոկոս է, իսկ դեպի Իրան արտահանումը կազմել է 35 մլն 630.2 հազար դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 5.9 տոկոսով:



Շատ մեծ ծավալներով՝ 183.1 անգամ աճել է նաեւ դեպի Ռումինիա արտահանումը՝ կազմելով 347.8 հազար դոլար: Իսկ դեպի Կորեայի Հանրապետություն արտահանումը հունվար-ապրիլին աճել է 78 անգամ՝ կազմելով 9 մլն 764.8 հազար դոլար: Հայաստանից Ֆրանսիա արտահանումը կազմել է 2 մլն 883.9 հազար դոլար՝ աճելով 98.5 տոկոսով:

Իսկ ինչ վերաբերում է արտահանվող ապրանքներին, ապա արտահանված ապրանքների մեջ ամենամեծ մասնաբաժինն են կազմել թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարերը, թանկարժեք մետաղները եւ դրանցից իրերը՝ 508 մլն 61.2 հազար դոլարի՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 3.9 անգամ: Հաջորդը մեքենաները, սարքավորումները եւ մեխանիզմներն են՝ 368 մլն 439.8 հազար դոլարի. աճը 15 անգամ է: Արտահանման ծավալներով երրորդ տեղում պատրաստի սննդի արտադրանքն է. այս տարվա առաջին 4 ամսում Հայաստանից արտահանվել է 269 մլն 987.9 հազար դոլարի պատրաստի սննդի արտադրանքը, որը 2022-ի նույն ժամանակահատվածի համեմատ՝ աճել է 43.6 տոկոսով:

ԿԱՐԵՎՈՐ

ՀՐԴԵՂԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ՝ ՄԱՐԶԱՀԱՄԵՐԳԱՅԻՆՈՒՄ

Կառավարությունը հունիսի 8-ի նիստում որոշեց ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը 2023-ի պետական բյուջեով հատկացված միջոցների հաշվին «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալի ավելացում իրականացնել՝ 39,000.0 հազար դրամ գումարի չափով, համալիրին ամրացված շենքի հակահրդեհային համակարգի ներդրման եւ կառուցման նախագծանախաշվային փաստաթղթերի ձեռք բերման նպատակով:

Վերոնշյալ ծախսերի կատարման համար նվազեցվում են ՀՀ ԿԳՄՍ նախարարության համար նախատեսված գումարների մի մասը:

Հաշվի առնելով, որ Համալիրն իր կազմակերպչաիրավական ձեւով առեւտրային կազմակերպություն է (ՓԲԸ), եւ անհրաժեշտ գումարը դրամաշնորհի ձեւով ստանալու դեպքում վերջինիս մոտ կառաջանա շահութահարկ՝ որոշվել է գումարը Համալիրի հատկացնել կանոնադրական կապիտալի ավելացման մեխանիզմով:

Այսպիսով, որոշվել է ավելացնել Համալիրի կանոնադրական կապիտալը լրացուցիչ բաժնետոմսեր տեխաբաշխելու միջոցով: ՀՀ կառավարության՝ 2022

թվականի հոկտեմբերի 22-ի N 1627-Ա որոշման 4-րդ կետով՝ ընկերության կանոնադրական կապիտալի չափը սահմանվել է 500,000.0 հազար դրամ, որը բաժանված է 25000 հատ հասարակ (սովորական) բաժնետոմսի՝ յուրաքանչյուրը 20.0 հազար դրամ անվանական արժեքով: Բոլոր բաժնետոմսերը պատկանում են Հայաստանի Հանրապետությանը: Նախագծով հատկացվող գումարի շրջանակներում (39,000.0 հազար դրամ) պետք է տեղաբաշխվի եւս 1950 հասարակ (սովորական) բաժնետոմս, որոնք նույնպես պատկանելու են Հայաստանի Հանրապետությանը:

ԹԻՎՆԱՑԱԲԻԿԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՎԵԼ Է

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը «Յետաքննող լրագրողներ» ՀԿ-ի հետ գուգահեռ նմուշառում էր կատարել տեղական արտադրության պաղեցված թռչնամսի մի քանի ապրանքանիշերից եւ հանձնել լաբորատոր հետազոտության: Փորձաքննությանը «Գետամեջ» ապրանքանիշի պաղեցված հավի նմուշներում հայտնաբերվել էր սալմոնելա:

Ստացված արդյունքների հիման վրա՝ ՍՍՏՄ-ն ստուգում է իրականացրել «Գետամեջ 2016» թռչնաֆաբրիկայում (ՀՀ, Կոտայքի մարզ) եւ հայտնաբերել իրական ալկոհոլ սահմանված նորմերի մի շարք խախտումներ:

Մասնավորապես՝  
- արտադրական շինությունների այն հատվածներում, որտեղ իրականացվում է սննդամթերքի արտադրություն, հատակի եւ պատերի մակերեսային պատրաստված չի եղել անջրանցիկ, լվացվող, փրփրապատվող նյութերից, դռները եղել են անհարթ, պատրաստված չեն եղել չներծող նյութերից,

- առաստաղների եւ արտադրական շինությունների վերելում գտնվող կառուցվածքները չեն եղել ապահով, այսինքն՝ չի կանխարգելվել կեղտի կուտակումը, բորբոսի առաջացումն ու խոնավության խտացումը,

- սննդամթերքի հետ շփման մեջ գտնվող տեխնոլոգիական սարքավորումները եւ գույքը հնարավորություն չեն տվել իրականացնել դրանց լվացման, մաքրման եւ փրփրապատման աշխատանքներ, պատրաստված չեն եղել համապատասխան նյութերից եւ չեն եղել բարվոք վիճակում: Թռչնաֆաբրիկայի արտադրական գործունեությունը կասեցվել է, սահմանվել է հայտնաբերված խախտումները վերացնելու ժամկետ:

«Օղովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՈՐԱՆԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԿԵՐԱՍՐԱՔԸ ԱՄՓՈՓՎԵԼ Է ՆՈՐ ՀՆԱՎԱՔԱԾՈՒՈՎ

«Հայ հին և միջնադարյան արվեստի ու եկեղեցական գեղանկարչությունը» ուղեցույց-դասկերագիրքն ամփոփում է Հայաստանի ազգային դասկերասրահի մշակական ցուցադրությունում ընդգրկված հայ հին և միջնադարյան արվեստի հավաքածուն՝ որմնանկարչության և մանրանկարչության ընդօրինակություններ, հայկական սրբանկարչության, ֆանդակի և դեկորատիվ-կիրառական արվեստի բարձրագույն նմուշներ, որոնք ամբողջական դասկերագրում են սալիս ազգային դարավոր արվեստի մասին: Պատմական ակնարկի ձևով ներկայացվում է արվեստի առանձին ճյուղերի զարգացման ընթացքը՝ սկսած Ք.ա. VIII դարից մինչև Ք.հ. XIX դարի կեսերը:



Ղևորինակվեցին, եւ այդ վավերական ընդօրինակությունները, որոնք պատկերասրահի սրահներում են, գիտական ուսումնասիրության թանկ հուշարձաններ են դարձել, իսկ իրական հուշարձանների որոշ մասը կորստի է մատնվել,- պատմեց Ավետիսյանը: Նա ընդգծեց, որ հայկական ծեռագրարվեստը բազմազան է նկարչական դպրոցներով, ուստի մանրանկարչության զարգացման ընթացքն ու դպրոցների գործունեությունը պատկերագրում ներկայացնելու նպատակով ընդգրկել են այն կարտեր ծեռագրերը, որոնք ոչ միայն այդ դպրոցի համար են նշանակալի, օրինակ՝ Ծերուն Ծաղկողի դպրոցի մանրանկարները եւ այլն: Քնարիկ Ավետիսյանն ասաց, որ պատկերասրահը ժամանակին հավաքել է, պատվիրել է հայկական միջնադարյան քանդակագործության նմուշներ, որոնք հայկական եկեղեցիների պատերի, շքամուտքերի քանդակային հարդարանքն են եղել: Արվեստի այդ տեսակին պատկանող թանկարանային նմուշները եւս ընդգրկվել են պատկերագրում:

Հայերեն եւ անգլերեն լեզուներով ուղեցույց-պատկերագրի շնորհանդեսը տեղի ունեցավ հունիսի 7-ին պատկերասրահի «Արտ բազիս» գրադարանում: Արվեստագիտության թեկնածու, դոցենտ Քնարիկ Ավետիսյանը, որն ուղեցույց-պատկերագրի հեղինակն է, նշեց՝ ստեղծվել է հանրամատչելի հրատարակություն, որը ներկայացնում է ազգային դարավոր արվեստի գանձերը, ինչը հնարավորություն կտա ճանաչելու ինքներս մեզ: Նրա խոսքով՝ հատկապես հիմա կարևոր է փոքր ծավալի, բայց հարուստ պատկերներով եւ բովանդակով լեզվով շարադրված նյութ մատուցել հանրության լայն շրջանակներին, հատկապես՝ Հայաստան այցելող զբոսաշրջիկներին: «Խնդիր էր դրված ներկայացնել հայ հին եւ միջնադարյան արվեստը՝ հիմնվելով պատկերասրահի հարուստ նյութի վրա: Տարիներ առաջ, երբ կազմավորվում էր պատկերասրահը, նրա ակունքներում կանգնած մարդիկ՝ Մարտիրոս Սարյանը, Ռուբեն Զարյանը եւ այլք, մտածում էին ներկայացնել ազգային արվեստն իր բազմազանության մեջ եւ ժամանակի ընթացքում զարգացման փուլերը՝ մեկ վայրում ցուցադրելու համար, ուստի հայկական որմնանկարչության լավագույն գործերն

ՖՈՒՏՈԼ

ՀՆԱՎԱՔԸ ՄԿՍՎԵՑ

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը սկսել է մարզական հավաքը ՀՀ տեխնիկական կենտրոն/Ֆուտբոլի ակադեմիայում: Հունիսի 8-ի երեկոյան հավաքականին կմիանան Վարազդատ Հարոյանը եւ Կամո Հովհաննիսյանը, հունիսի 11-ին՝ Անդրե Զալըզը, հունիսի 12-ին՝ Էդուարդ Սպերջյանն ու Գեորգի Հարությունյանը: Լուկաս Սելարայանը եւ Նորբերտո Բրիտոն Բալեկյանը թիմին կմիանան Ուելսում հունիսի 14-ին. հաղորդում է ՀՀ-ի կայքը: Ժիրայր Շաղոյանի ժամանման օրը պարզ կդառնա ավելի ուշ: Արդեն հավաքին են միացել հետեւյալ ֆուտբոլիստները՝ Օգնյեն Զանչարեւիչ - «Ալաշկերտ» Արսեն Բեգլարյան - «Ուրարտու» Ստանիսլավ Բուչնե - «Փյունիկ» Ժիրայր Մարգարյան - «Ուրարտու» Էրիկ Փիլոյան - «Ուրարտու» Դավիդ Դավիդյան - «Փյունիկ» Սերգեյ Մուրադյան - «Նոա» Տարոն Ոսկանյան - «Ալաշկերտ» Ստյոպա Սկրոչյան - ԲԿՄԱ Արտակ Դաշյան - «Փյունիկ» Հովհաննես Հարությունյան - «Փյունիկ» Ուգոչուկու Իվո - «Ուրարտու» Վրեյմար Անգուլո - «Ալաշկերտ» Արթուր Սերոբյան - «Արարատ-Արմենիա» Արթուր Միրանյան - «Ալաշկերտ» Նաիր Թիկնիզյան - «Լոկոմոտիվ» (Մոսկվա, Ռուսաստան) Վահան Բիչախչյան - «Պոզոն» (Լեհաստան) Խորեն Բայրամյան - «Ռոստով» (Ռուսաստան) Հրանտ-Լեոն Ռանոս - «Բորուսիա» (Մյունխենգլադբախ, Գերմանիա) Տիգրան Բարսեղյան - «Սլովան» (Սլովակիա): «Եվրո-2024»-ի ընտրական մրցաշարում Հայաստանի թիմը հունիսի 16-ին կհյուրընկալվի Ուելսի հավաքականին: Հունիսի 19-ին Երեւանում Հայաստանի թիմը կխաղա Լատվիայի հավաքականի հետ:

ՀՈՒՆԻՍԻԱՆԿԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆՈՐ ՇԱՐՔ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում մեկնարկել է «Լեռնցի ժողովուրդների ավանդական գեղարվեստական մշակույթի ոլորտները: Պատմափոփոխական կադերն ու գուգահեռները Եվրասիայի ժողովուրդների ավանդական եւ ակադեմիական արվեստում» եռօրյա միջազգային գիտագործնական ֆորումը՝ նվիրված ՀՀ ԳԱԱ հիմնադրման 80-ամյա հոբելյանին: Ֆորումը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի եւ Արվեստների դասնության ռուսաստանյան ինստիտուտի (Մանկյ Պետերբուրգ) առաջին համատեղ գիտական միջոցառումն է:

գիր: Սա մեր առաջին համատեղ գիտական ??միջոցառումն է: 2023 թվականը հոբելյանական է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի համար, որը նշում է հիմնադրման 80-ամյակը: Հոբելյանական տարվա ընթացքում Արվեստի ինստիտուտը մտադիր է անցկացնել գիտական միջոցառումների շարք՝ նվիրված այս փառավոր հոբելյանին: Եվ շատ խորհրդանշական է, որ այս շարքի առաջին ակորդը հնչում է մեր պետերբուրգյան գործընկերների հետ միասին:

Ֆորումի մասնակիցներին ողջունեց Արվեստների պատմության ռուսաստանյան ինստիտուտի գործիքագիտության սեկտորի վարիչ, կոմպոզիտոր, գործիքագետ, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Իգոր Մացիեւսկին: Նա նշեց, որ Հայաստանի եւ Ռուսաստանի արվեստագիտության հաստատությունները պատմականորեն կապված են միմյանց հետ եւ սերտ համագործակցում են: Նա հիշատակեց հայ արվեստագետների, որոնք մեծ ներդրում ունեն Ռուսաստանի մշակույթի զարգացման գործում: Իգոր Մացիեւսկին մասնակիցներին մաղթեց արդյունավետ աշխատանք:

Ֆորումի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանը: «Անցյալ տարի ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի եւ Արվեստների պատմության ռուսաստանյան ինստիտուտի միջեւ ստորագրվեց համագործակցության պայմանա-

Արվեստների պատմության ռուսաստանյան ինստիտուտի գործիքագիտության սեկտորի վարիչ, կոմպոզիտոր, գործիքագետ, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Իգոր Մացիեւսկին: Նա նշեց, որ Հայաստանի եւ Ռուսաստանի արվեստագիտության հաստատությունները պատմականորեն կապված են միմյանց հետ եւ սերտ համագործակցում են: Նա հիշատակեց հայ արվեստագետների, որոնք մեծ ներդրում ունեն Ռուսաստանի մշակույթի զարգացման գործում: Իգոր Մացիեւսկին մասնակիցներին մաղթեց արդյունավետ աշխատանք:

Ֆորումի գեկուցումներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի եւ Արվեստների պատմության ռուսաստանյան ինստիտուտի մասնագետները, հետազոտողներ Հայաստանի, Ռուսաստանի Դաշնության, Գերմանիայի, Չեռնոգորիայի, Բելառուսի գիտական տարբեր կենտրոններից: Ֆորումի շրջանակներում հունիսի 7-ին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում (Մարշալ Բաղդամյան պողոտա 24/4) տեղի կունենա կլոր սեղան՝ «Ավետ Տերտերյան. «ռուսական-սովետական սիմֆոնիզմը»՝ հայկական համատեքստում» թեմայով, իսկ հունիսի 8-ին՝ կլոր սեղան՝ «Կինոռեժիսոր Արտավազ Փելեշյանի աշխարհի սիմֆոնիան» թեմայով:

ՈՒՐ ԿԳՆԱ ՄՊԵՐՑՅԱՆԸ

Ամստերդամի «Այաքսը» ցանկանում է ձեռք բերել ռուսական «Կրասնոդարի» եւ Հայաստանի հավաքականի 23-ամյա կիսապաշտպան Էդուարդ Սպերջյանին: Հոլանդական ակումբն առաջիկայում կսկսի բանակցությունները «Կրասնոդարի» հետ, որը պատրաստ է վաճառել Էդուարդ Սպերջյանի տրանսֆերը 10 միլիոն եվրո գերազանցող առաջարկի դեպքում: Առաջին մրցաշրջանում Էդուարդ Սպերջյանը «Կրասնոդարի» հետ մասնակցել է 40 հանդիպման, խփել է 14 գոլ, կատարել 14 գոլային փոխանցում: Նրա պայմանագիրը ռուսական ակումբի հետ նախատեսված է մինչև 2026թ. հունիս:

● Հունիսի 9-ին համաճիկների պետական թատրոնում տեղի կունենա «Փոքրիկ իշխանը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1500 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:



**ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՐՑ. Ամենաժամանակահատվածը ինչքան կարող է ավելանալ ապահովագրվածքը եւ ո՞ր դեղեկերում:**  
*Սարգիս Խաչատրյան (34 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Ձեր ապահովագրվածքը առավելագույնը կարող է եռապատկվել, ընդ որում դա կարող է տեղի ունենալ բացառիկ դեպքերում՝ էականորեն վատ ապահովագրական պատմություն (այնպիսի ԱՊՊԱ պատահարներում ներգրավվել, որի հետևանքով իր կողմից կնքված ԱՊՊԱ պայմանագրի շրջանակներում տրվել է հատուցում երրորդ անձին՝ այդպիսի յուրաքանչյուր դեպքի համար ստանալով մալուս՝ կախված այդ հատուցման գումարի չափից) վաստակելու դեպքում:


Եթե ԱՊՊԱ համակարգ նոր մուտք գործած սպառողը մեկ տարվա ընթացքում ունեցել է երկու պատահարի գծով մեղավորություն, որոնցից յուրաքանչյուրի հատուցումը մեկ միլիոն ՀՀ դրամից ավելի է, ապա այդ սպառողի ապահովագրվածքը կեռապատկվի:

**Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո**

**«ԺՐՈՎՈՒՐԳ».** Մեկ տարվա ընթացքում ապահովագրվածքը կարող է եռապատկվել անգամ, երբ փոխհատուցված գումարի չափը չի գերազանցում մեկ միլիոն ՀՀ դրամը այն դեպքում, երբ սպառողը նվազագույնը երեք պատահար ունենա իր մեղավորությամբ, որոնցից գոնե երկուսը կլինեն 200.000-500.000 ՀՀ դրամի սահմաններում, մյուսը՝ 100.000-200.000 ՀՀ դրամի սահմաններում:

**ԱՇԽԱՏԱՆՔ**

**ՀԱՐՑ. Ի՞նչ առաջադրանքներ են ընդգրկվում վարչապետի աշխատակազմի ֆաղափարակալ ծառայությունում թափուր տեղ զբաղեցնելու համար անցկացվող թեստերում:**  
*Աշխեն Հարությունյան (26 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Մրցույթի թեստերում ընգրկվում են մասնագիտական գիտելիքների եւ կոմպետենցիաների վերաբերյալ թեստային առաջադրանքներ: Թեստը բաղկացած է 50 թեստային առաջադրանքից: Մասնագիտական գիտելիքների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, տվյալ ոլորտը եւ քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված գործառնությունների իրականացումը կանոնակարգող սահմանադրական օրենքներից, օրենքներից, օրենսգրքերից եւ տվյալ պաշտոնի գործառնությունների իրականացման համար հենք հանդիսացող բազային գիտելիքների շրջանակից՝ հիմք ընդունելով տվյալ մարմնի գործունեության հիմնական ոլորտները եւ տվյալ պաշտոնի առանձնահատկությունները:

**Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ**

**«ԺՐՈՎՈՒՐԳ».** Կոմպետենցիաների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմվում են՝ հիմք ընդունելով տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված ընդհանրական եւ ընտրանքային կոմպետենցիաները:

Էջը՝ ՍՅՈՒՆԷ ՀԱՄԱՐՉՈՒՄՅԱՆԻ

**ԼՈՒՐ ԿԱԴՐ**

Լուսանկարը՝ համացանցից



Սոցի ալի ընթացքում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը մասնակցել է «Եվրասիա՝ մեր տուն» ցուցահանդեսին: Ցուցահանդեսի ժամանակ ԱՊՀ վարչապետները ծանոթացել են ներկայացված արտադրանքին:

Փաշինյանը շատ արագ նկատում է Բելառուսի վարչապետի բացակայությունը իր կողքից եւ նրան «ձեռքի ուժի օգնությամբ ստիպում է» լսել հայկական արտադրանքի մասին:

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Մեր թերթը  
Բաժանորդագրվելու  
համար կարող եք դիմել



«Հայամուլ» ՓԲԸ  
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ  
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ  
հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

**ԱՌԱՋԱՐԿ**

**հայկական տպագիր մամուլից**

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ \_\_\_\_\_  
Ազգանուն՝ \_\_\_\_\_  
Առաքման հասցե՝ \_\_\_\_\_  
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ \_\_\_\_\_

Հեռ.՝ (060) 490049  
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

**ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ**



Շիրակ	+3 + 8 +21 + 26	Արարատ	+14 + 17 +31 + 33
Կոտայքի լեռներ	+4 + 9 +21 + 25	Արմավիր	+12 + 15 +30 + 32
Կոտայքի նախալեռներ	+13 + 15 +27 + 29	Վայոց ձորի լեռներ	+4 + 8 +20 + 23
Գեղարքունիք	+4 + 9 +20 + 25	Վայոց ձորի նախալեռներ	+14 + 17 +27 + 31
Լոռի	+11 + 16 +20 + 26	Սյունիքի հովիտներ	+13 + 17 +23 + 27
Տավուշ	+12 + 15 +23 + 27	Սյունիքի նախալեռներ	+9 + 12 +21 + 24
Արագածոտնի լեռներ	+3 + 7 +20 + 23	Արցախ	+14 + 17 +28 + 32
Արագածոտնի նախալեռներ	+13 + 16 +26 + 30	Երեւան	+13 + 15 +29 + 31

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ  
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՞/3, հեռ՝ 010 54-64-23  
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03U089086  
տրված է 24.11.2010  
Ստորագրված է տպագրության 8.6.2023

Գլխավոր խմբագիր՝  
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում  
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրայնաչափում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: